Քարտեզ-սխեմա

# «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր










## Պայմանական նշաններ

- ՀՀ պետական սահման
- բնակավայրեր
- գետեր
- վտակներ
- լճեր, ջրամբարներ

## Հատուկ պահպանվող տարածքներ

- «Շիկահող» Պետական արգելոց - 12137,08 հա
- «Սոսու պուրակ» Պետական արգելավայր - 64,2 հա
- «Խուստուփ» Պետական արգելավայր - 6946,74 հա
- «Ջանգեզուր» Պետական արգելավայր - 25870,64 հա
- «Արևիկ» Ազգային պարկ - 34401,8 հա (ներառյալ՝ «Բողաքար» Պետական արգելավայրը)
- «Բողաքար» Պետական արգելավայր

*ՀՀ Կառավարության 2016թ-ի սեպտեմբերի 8-ի N929-Ն որոշմամբ <<Զանգեզուր>> Կենսոլորտային Համալիր>> ՊՈԱԿ-ը ունի 3 մասնաճյուղ՝*

**1 <<Շիկահող>> մասնաճյուղ, որը ներառում է 3 տեղամաս՝**
**<<Շիկահող>> պետական արգելոց տեղամաս**
**<<Սոսու պուրակ>> պետական արգելավայր տեղամաս**
**<<Խուստուփ>> պետական արգելավայր տեղամաս**
**2 <<Արևիք>> մասնաճյուղ որը ներառում է 2 տեղամաս՝**
**<<Արևիք> ազգային պարկ տեղամաս**
**<<Բողաքար>> պետական արգելավայր տեղամաս**
**3 <<Զանգեզուր>> մասնաճյուղ որը ներառում է 2 տեղամաս՝**
**<<Զանգեզուր>> պետական արգելավայր տեղամաս**
**<<Սև լիճ>> պետական արգելավայր տեղամաս**

ZANGEZUR TOUR
ZANGEZUR TOUR

Սյունիքի տարածքը հարուստ է արժեքավոր էկոհամակարգերով, ռեկրեացիոն և պատմամշակութային ռեսուրսներով: Էկոտուրիզմի և այցելությունների երթուղիները կարող են բավարարել տարբեր տիպի և հետաքրքրություն ունեցող այցելուների: Դրանք կարող են լինել էկոլոգիական, պատմամշակութային, ընդհա նուր գիտաճանաչողական բնույթի, համալիր կամ նեղմասնագիտացված արշավներ՝ կախված այցելուների տիպից և հետաքրքրություններից:

Արշավներըհիմնականում ներառում են տարածքի գեղատեսիլ վայրերը, բնապատմական հուշարձանները և այլ առանձնահատկությունները: Էկոտուրիզմի նեղ մասնագիտացված ձևերն են՝ վայրի կենդանական և բուսական աշխարհի և դրանց ապրելավայրերի դիտարկման, հնագիտական, ճարտարա պետական, ազգագրական, մշակութային և այլ արշավները:

Երթուղիներում ընդգրկված տարածքների կտրտվածությունը և դժվարամատչելիությունը պահանջում են այցելուներից ֆիզիկական բավարար պատրաստվածություն, հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ: Այցելությունների լավագույն ժամանակահատվածը մարտ - նոյեմբեր ամիսներն են: Պահպանվող տարածքում երթուղիների մի մասը հնարավոր է անցնել ավտոմեքենաներով /միայն թույլատրված հատվածներում/, հետիոտն կամ ձիերով: Պետարգելոցի տարածքում ցանկացած ավտոտրանսպորտի օգտագործումը արգելվում է, դրանք պետք է սահմանափակվեն մինչև ուղեփակոցներ:

Զմեռային սեզոնը օգտագործելու նպատակով կազմակերպվում են նաև կենդանիների հետքերի դիտարկումներ:

Վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտարկման արշավները կարող են մեծ դեր խաղալ ճանաչողության և բնապահպանական կրթության գործում՝ ներգրավելով տեղական բնակչությանը, դպրոցականներին և ուսանողներին:



Երթուղի 1 / Շիկահող– Քսաջուր - Ծավի ջրվեժ-Սոսու պուրակ

Երթուղին սկսվում է Շիկահող գյուղից դեպի Շիկահող արգելոցի տեսարանի դիտակետից դիտում /մեքենայով/, այնուհետև հասնում է գետի վրա գտնվող միջնադարյան կամուրջին: Կամրջի մոտակա արահետից սկսած երթուղին /հետիոտն/ անցնում է գետակի անտառածածկ հովտով, հասնում շուրջ 1 կմ հարավ Քսաջուր տարածքը՝ միջնադարյան եկեղեցու ավերակներին, որի ներսում կառուցված է փոքրիկ ջրավազան: Եկեղեցու հիմքից բխում է հանքային աղբյուր / ջուրը բուժիչ է/: Այնուհետև հետադարձ ուղղով երթուղին շարժվում է դեպի Ծավ գյուղ , հետո 2 կմ դեպի արևմուտք 10 մ բարձրություն ունեցող գեղատեսիլ Ծավի ջրվեժ, ինչպես տեղացիներն են անվանում Չրչռ և հասնում <<Սոսիների պուրակ>> արգելավայր, որտեղ գտնվում է Հայաստանում միակ սոսիների բնական պուրակը: Էկոտուրի տևողությունը ավտոբուսով 4ժամ է, իսկ ոտքով մոտ 3.5 ժամ: Երթուղու երկարությունը 60 կմ է, իսկ բարձրությունը ծովի մակարդակից ՝ 620մ -1700մ:

## Երթուղի 2 / Շիկահող - Մեղրու լեռնաշղթա

Երթուղին սկսվում է Շիկահող գյուղից դեպի Սրաշեն գյուղ Սուրբ Հռիփսիմե միջնադարյան եկեղեցի, այնուհետև Շիկահող-Ծավ մայրուղով երթուղին շարժվում է դեպի Կապջուղա հատվածի միջնադարյան կամուրջ, այնուհետև դեպի Մեղրու լեռնաշղթա: Ճանապարհին կարող ենք հանդիպել արգելոցի տարածքում հանդիպող էնդեմիկ բուսատեսակների, կաթնասունների/բեզոարյան այծ, եվրոպական այծյամ, վայրի խոզ, շելկովնիկի կուտորա/, սողունների/հայկական իժ, գյուրզա, կարմիր սահնօձ/, թռչունների/խայտաբղետ քարակեռնեխ, վայրի հնդկահավ (ուլար), կովկասյան մայրահավ/: Երթուղին շարունակվում է դեպի Նավսի քար հատված, ապա իջնում է դեպի Ծավ գյուղ: Էկոտուրի տևողությունը ավտոբուսով 2.5 ժամ է, իսկ ոտքով մոտ 5 ժամ:



# Երթուղի 3 / Շիկահող - Կենու պուրակ - Սոսիների պուրակ

Երթուղին սկսվում է Շիկահող գյուղի եկեղեցուց (ուշ միջնադարյան՝17-րդ դար), անցնում է հնագույն բնակավայր Խրավանդի միջով, Շիկահող գետի գեղատեսիլ կիրճով և հասնում է կենու պուրակին (20հա)՝ գյուղից հարավ-արևմուտք 3.5 կմ հեռավորության վրա: Հետո երթուղին շարունակվում է անտառային ճանապարհով (8կմ) դեպի ենթալպյան մարգագետիններ: Ճանապարհին կարող ենք հանդիպել արգելոցի տարածքում հանդիպող էնդեմիկ բուսատեսակների, կաթնասունների/եվրոպական այծյամ, քարակզաքիս, փորսուղ, վայրի խոզ/, սողունների, թռչունների/սև փայտփոր,խայտաբղետ փայտփոր, անդրկովկասյան փասիան, անտառակցար/: Այն կարելի է անցնել հետիոտն կամ հեծած, իսկ մինչև ուղեփակոց՝ մեքենայով: Երթուղին շարունակվում է դեպի Ծավ գյուղի եկեղեցի և հասնում է <<Սոսիների պուրակ>> արգելավայր, որտեղ գտնվում է Հայաստանում միակ սոսիների բնական պուրակը: Էկոտուրի տևողությունը ավտոբուսով 3.5 ժամ է, իսկ ոտքով մոտ 8 ժամ: Երթուղու երկարությունը 27 կմ է, իսկ բարձրությունը ծովի մակարդակից՝ 940մ -1700մ:

Երթուղի 4 / Կապան - Խուստուփ – Շիկահող գյուղ

*Ինչպես հասնել երթուղու մեկնարկ.*

Եթե դուք գալիս եք Երևանից, ապա շարժվեք դեպի Կապան քաղաք, որտեղից էլ սկսվում է երթուղու մեկնարկը:

Երթուղին սկսվում է Կապան քաղաքից դեպի Բաղաբուրջ գյուղ, այնուհետև շարժվում է դեպի <<Խուստուփ>> պետական արգելավայրը, որտեղ վեր է խոյանում Խուստուփ լեռը /3201մ / և որի լանջին է թաղված հայ ազգային հերոս, քաղաքական և ռազմական գործիչ Գարեգին Նժդեհը: Ճանապարհը խորդուբորդ է ու լեռնային: Ճանապարհին կարող եք հանդիպել արգելոցի տարածքում հանդիպվող էնդեմիկ բուսատեսակների, կաթնասունների/բեզոարյան այծ, եվրոպական այծյամ, վայրի խոզ, /սողունների, թռչունների/կարմրաթև մագլցող, կապույտ քարակեռնեխ, վայրի հնդկահավ (ուլար), կովկասյան մայրահավ, մոխրագույն կաքավ/, բազմաթիվ ծաղիկներ և խոտաբույսեր, որոնք տեղացիները օգտագործում են թեյի մեջ և որոնք ունեն բուժիչ հատկություններ: Երթուղին շարժվում է դեպի Շիշկերտ գյուղ: Էկոտուրի տևողությունը ավտոբուսով 2 ժամ է, իսկ ոտքով մոտ 8 ժամ: Երթուղու երկարությունը 70 կմ է, իսկ բարձրությունը ծովի մակարդակից ՝ 910մ -3200մ:

# Երթուղի 5 / Սրաշեն -Ներքին Հանդ -Սոսու պուրակ արգելավայր

Երթուղին սկսվում է Շիկահողից, այնուհետև շարունակվում դեպի Սրաշեն գյուղի Սբ. Հռիփսիմե եկեղեցի /մեքենայով/ և արևելյան հաճարենու /Fagus orientalis/ միակ բնական պուրակը /հետիոտն/ Հարավային Հայաստանում: Երթուղին շարունակվում է /ավտոմեքենայով/ դեպի Ներքին Հանդ գյուղի եկեղեցի, այնուհետև /հետիոտն/ հասնում Ծավ գետի վրա գտնվող կամուրջը և Սուսու պուրակ արգելավայրը /աշխարհագրական կոորդինատներ N39 03 00, E46 30 38/:

«Սոսու պուրակ» պետական արգելավայրը գտնվում է արգելոցի արևելյան մասում և ստեղծվել է Կովկասում ամենախոշոր բնական արևելյան սոսու /Platanus orientalis/ պուրակի պահպանության նպատակով: Գտնվում է Ծավ գետի ափերին, ծովի մակերևույթից 700-800 մ բարձրության վրա և զբաղեցնում է 64,2 հա տարածք: Սոսու պուրակը ձգվում է մոտ 10 կմ երկարությամբ, 50-200 մ լայնությամբ նեղ շերտով, մոտավորապես այդքան էլ շարունակվում է Ծավ գետի ներքին հոսանքում: Ներկայումս այստեղ աճում են 1000-ից ավելի 200-250 տարեկան սոսու ծառեր, որոնց բարձրությունը 30-35 մ է, բների տրամագիծը հասնում է 3 մետրի, հանդիպում են նաև հսկա փչակներ ունեցող դարավոր ծառեր: Պուրակում աճում են նաև հունական ընկուզենին, կովկասյան փռշնին և ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ:

Երթուղու տևողությունը կազմում է մոտ 8-10 ժամ, երկարությունը՝ շուրջ 15կմ, միջին բարդության է, հնարավոր են անհատական և փոքր խմբերով /մինչև 10 հոգի/ արշավներ: Այցելուների սնունդը և գիշերումը նպատակահարմար է կազմակերպել Ներքին Հանդ գյուղում: Այստեղ առկա է գյուղական տուրիզմի /ագրոտուրիզմ, էթնոտուրիզմ/ զարգացման ներուժ, որը կարելի է զուգակցել երթուղու հետ:



## Երթուղի 6 / Շիկահող - Ջրվեժ - Կեմանց գյուղատեղի

Երթուղին սկսվում է Շիկահողից դեպի Ծավ գյուղ ավտոմեքենայով, այնուհետև շարունակվում /հետիոտն/ գյուղից մոտ 2 կմ արևմուտք՝ Ծավի աջ վտակի վրա գտնվող Չոռիկ տեղամաս, /1250մ ծ.մ.բարձր./, որտեղ գետակը հոսում է նեղ կիրճով և առաջացնում գեղեցիկ ջրվեժ՝ մոտ 10մ բարձրությամբ /աշխարհագրական կոորդինատներ N39 03 123, E46 24 802/: Այնուհետև երթուղին շարունակվում է դեպի Շիշկերտ գետի ձախափնյա /մոտ 0,5կմ հեռ. վրա/ Կեմանց գյուղատեղի և դեպի գետի կիրճը:

Հնարավոր են հետիոտն կամ ձիերով անհատական և փոքր խմբերով /մինչև 10 հոգի/ արշավներ:

Երթուղու տևողությունը կազմում է մոտ 6 ժամ, հեռավորությունը Շիկահող գյուղից 18կմ:

Լանդշաֆտը լեռնահովտային է, հիմնականում անտառածածկ: Այցելուների գիշերումը նպատակահարմար է Ծավ գյուղում կամ Կեմանցում /վրանային ժամանակավոր ճամբար/:



Երթուղի 7 / Շիկահող Քսաջուր/Քոսաջուր/ - Մազրա գյուղատեղի

Երթուղին սկսվում է Ծավ գյուղից, այնուհետև շարունակվում դեպի 9 կմ արևմուտք՝ Մեղրի տանող մայրուղու ձախ կողմում, Ծավ գետի վրա գտնվող միջնադարյան, միաթռիչք կամարով մոտ 10մ բարձրությամբ կամուրջ /աշխարհագրական կոորդինատներ N39 01 778, E46 24 155/: Կամրջի հարևանությամբ գետի ափին բխում է հորդ աղբյուր, որը հարմար է հանգստի կազմակերպման համար: Կամրջի մոտակա արահետից սկսած երթուղին /հետիոտն/ անցնում է գետակի անտառածածկ հովտով, հասնում շուրջ մեկ կմ հարավ Քսաջուր /Քոսաջուր/ տարածքը՝ միջնադարյան կիսավեր, կոպտատաշ շարվածքով եկեղեցին, որի ներսում կառուցված է փոքրիկ ջրավազան /1,5x2x1,2մ չափերով/:

Եկեղեցու հիմքից բխում է հանքային աղբյուր /ըստ ավանդության ջուրը բուժիչ է/: Շրջակայում կան բնակատեղի հետքեր, տապանաքարեր, լանդշաֆտը լեռնահովտային է, անտառածածկ: Վերադարձին երթուղին շարունակվում է կամրջից դեպի հվ. արևմուտք, Մազրա գետակի աջ ափին գտնվող Մազրա հին գյուղատեղի /հնարավոր է ավտոմեքենայով/:

Երթուղին միջին բարդության է, տարածքը գտնվում է մոտ 1700 մ ծ.մ. բարձր, կարող է իրականացվել հետիոտն կամ ձիերով: Երթուղու տևողությունը կազմում է մոտ 8 ժամ, հեռավորությունը Շիկահող գյուղից 25 կմ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով /մինչև 10 հոգի/ արշավներ: Այցելուների գիշերումը նպատակահարմար է Ծավ գյուղում:

## Երթուղի 8/ Մեղրիի լեռնաշղթա

Երթուղին սկսվում է Կապան - Շվանիձոր ճանապարհի լեռնանցքից և շարունակվում է դեպի արևելք Մեղրիի լեռնաշղթայի երկայնքով մինչև պետական սահմանի վրա գտնվող Բարթաս լեռը: Երթուղու հյուսիսային մասում գտնվում է Շիկահողի պետական արգելոցը՝ Մթնաձորի կիրճով, որտեղ պահպանվել են մարդու միջամտությունից գրեթե զերծ մնացած կաղնու կուսական անտառները: Երթուղու հարավային մասը զբաղեցնում է Արևիք ազգային պարկը իր յուրահատուկ բնաշխարհով: Երթուղին իր ամբողջ երկայնքով հագեցած է գեղեցիկ բնական տեսարաններով: Այստեղ հանդիպում են Միջազգային և ՀՀ կարմիր գրքերում ընդգրկված կովկասյան ընձառյուծը (Panthera pardus), բեզոարյան այծը (Capra aegagrus), սև անգղը (Aegypius monachus): Ճանապարհին կարող են հանդիպել գորշ արջը(Ursus arctos syriacus), լուսանը(Felis lynx), անտառային կատու (Felis silvestris caucasica), այծյամ (Capreolus capreolus), վայրի խոզը Sus scrofa), գայլը(Canis lupus), աղվես (Vulpes vuleps), գորշուկ (Meles meles), եվրոպական նապաստակ (Lepus europaeus) և բազմաթիվ այլ կենդանիներ և թռչուններ: Սողուններից կարող են հանդիպել նաև գյուրզա (Macrovipera lebetina) և Միջազգային և ՀՀ կարմիր գրքերում գրանցված հայկական իժ (Montivipera raddei):

Երթուղու երկարությունը մոտ 16կմ է, տևողությունը կազմում է մոտ 10 ժամ: Այն հարմար է կենդանիների և թռչունների դիտարկման համար: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, իսկ գիշերումը նպատակահարմար է կազմակերպել Ծավ կամ Շիկահող գյուղերում:



## Երթուղի 9/ Շիշկերտ Խուստուփ լեռնազանգված

Երթուղին սկսվում է Շիշկերտ գյուղից, շարունակվում հյուսիս դեպի Շիշկերտ / Շիշկերտ լեռ՝ 2735մ/, այնուհետև դեպի հյուսիս արևմուտք՝ մինչև Խուստուփ լեռնազագաթ /մոտ 5,5կմ/: Խուստուփ գագաթից այն թեքվում է դեպի հարավ արևմուտք և ճանապարհով իջնում Շիշկերտ գյուղ:

Ճանապարհին հիմնականում անցնում է Խուստուփ լեռնազանգվածի գեղատեսիլ ջրբաժանով, որտեղից երևում են շրջակա լեռներն ու անտառապատ հովիտները: Հանդիպում են բազմաթիվ աղբյուրներ, բաց տեղամասերում կարող են հանդիպել նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզոարյան այծը (Capra aegagrus), կովկասյան մարեհավը (Tetrao mlokosiewiczi), գայլը (Canis lupus), վայրի հնդկահավը (Tetraogallus caspius) և այլ վայրի կենդանիներ: Անտառային գոտում հանդիպում են այծյամը (Capreolus capreolus), վայրի խոզը (Sus scrofa), գորշ արջը, աղվեսը (Vulpes vuleps), գորշուկը (Meles meles), եվրոպական նապաստակը (Lepus europaeus) և այլ կենդանիներ:

Երթուղին տևում է մոտ 10 ժամ, միջին դժվարության, երկարությունը մոտ 23 կմ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով: Գիշերումը կարելի է կազմակերպել Վերին Վաչագան կամ Շիկահող գյուղերում:

## Երթուղի 10 / Վերին Վաչագան – Խուստուփ լեռնազանգված

Երթուղին սկսվում է Վերին Վաչագան գյուղից, շարունակվում դեպի արևմուտք /մոտ 4,5կմ/, այնուհետև դեպի հարավ՝ մինչև Խուստուփ լեռնագագաթ /մոտ 6կմ/: Խուստուփ գագաթից այն վերադառնում է Վերին Վաչագան կամ շարունակվում է դեպի հարավ արևմուտք, այնուհետև հարավ և ճանապարհով իջնում Շիշկերտ գյուղ:

Ճանապարհին հիմնականում անցնում է Խուստուփ լեռնազանգվածի գեղատեսիլ ջրբաժանով, որտեղից երևում են շրջակա լեռներն ու անտառապատ հովիտները: Հանդիպում են բազմաթիվ աղբյուրներ, բաց տեղամասերում կարող են հանդիպել նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզոարյան այծը (Capra aegagrus), կովկասյան մարեհավը (Tetrao mlokosiewiczi), գայլը (Canis lupus), վայրի հնդկահավը (Tetraogallus caspius) և այլ վայրի կենդանիներ: Անտառային գոտում հանդիպում են այծյամը (Capreolus capreolus), վայրի խոզը (Sus scrofa), գորշ արջը, աղվեսը (Vulpes vuleps), գորշուկը (Meles meles), եվրոպական նապաստակը (Lepus europaeus) և այլ կենդանիներ:

Երթուղին տևում է մոտ 10 ժամ, միջին դժվարության, երկարությունը մոտ 24 կմ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով: Գիշերումը կարելի է կազմակերպել Շիկահող գյուղում:

# Երթուղի 11 / Գեղի - Քիրս – Արամազդ

Երթուղին սկսվում է Գեղի գյուղից Կարդ գետի հովտով դեպի Քիրս գյուղի եկեղեցի, թեքվում դեպի հյուսիս արևելք, հասնում հանքային աղբյուրին՝ մոտ 2000մ ծմբ /աշխ. կորդինատներ՝ N39° 16′ 56′′, E 046° 06′ 35′′/ և շարունակվում դեպի Արամազդ լեռնագագաթ 3399մ ծմբ: Հեռավորությունը Քիրս գյուղից մինչև Արամազդ լեռնագագաթ կազմում է մոտ 20 կմ:

Լանդշաֆտը բարձր լեռնային է,երթուղին հարմար է կենդանիների դիտարկման համար, հանդիպում են ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզոարյան այծը (Capra aegagrus), մուֆլոնը, կովկասյան մարեհավը (Tetrao mlokosiewiczi), վայրի խոզը (Sus scrofa), գայլը (Canis lupus), գորշ արջը (Ursus arctos), վայրի հնդկահավը (Tetraogallus caspius) և այլ վայրի կենդանիներ:

Երթուղու տևողությունը կազմում է մոտ 12 ժամ, հանքային աղբյուրի մոտ կարելի է կազմակերպել վրանային ճամբար և գիշերում: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով: Կարելի կազմակերպել երկու օրանոց արշավներ /գիշերումը կարելի է կազմակերպել վրանային ճամբարում/ ընդգրկելով Դարմանաձորի հատվածը:



Երթուղի 12 / Քաջարանցի ձոր - Գոգի լիճ /Կապուտան/

Երթուղին սկսվում է Քաջարան գյուղի արևմտյան ծայրամասից /կիսավեր քարե տնակ, նախկին մետեոկայան, 2610 ծ.մ.բ., N39° 07′ 41,6′′, E 046° 04′ 22′′/, շարունակվում դեպի տաղավար /աղբյուր/, այնուհետև այն թեքվում է դեպի հարավ արևմոտք և Քաջարանց գետակի կիրճով հասնում դեպի նրա ակունքները՝ Գոգի /Կապուտան/ լիճ՝ 3218 մ բարձրության վրա /աշխ. կորդինատներ՝ N39° 05′ 36′′, E 046° 03′ 38′′/: Լիճը զբաղեցնում է սառցադաշտային կառի հատակը, մոտ 22մ խորությամբ, և հանդիսանում է Զանգեզուրի լեռնաշղթայի ամենամեծ սառցադաշտային ծագման լիճը:

Երթուղու երկայքով լանդշաֆտը բարձր լեռնային է /ալպյան տիպի/, խոր, կտրտված ձորերով, գահավեժ քարափներով և ատամնավոր գագաթներով: Երթուղին հարմար է կենդանիների դիտարկման համար, հանդիպում են ՀՀ կարմիր գրքում գրանցված բեզոարյան այծը (Capra aegagrus), կովկասյան մարեհավը (Tetrao mlokosiewiczi), գայլը (Canis lupus), գորշ արջը, գիշատիչ թռչուններ և այլ կենդանիներ:

Երթուղու տևողությունը կազմում է 8 ժամ, հեռավորությունը Քաջարան գյուղից մինչև Գոգի լիճ կազմում է մոտ 10կմ: Կարելի կազմակերպել երկու օրանոց արշավներ՝ ընդգրկելով Կապուտջուղ գետի հովիտը և ջրվեժները /Քաջարան քաղաքից 3կմ արմ, 2500-2600 մ. բարձրությունների վրա, գիշերումը կարելի է կազմակերպել վրանային ճամբարում/:

Լիճը սահմանամերձ է, այցելությունները անհրաժեշտ է համաձայնեցնել սահմանապահ ծառայությունների հետ: Հնարավոր են անհատական և փոքր խմբերով արշավներ, հետիոտն կամ ձիերով:

*<<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ը հանդիպումներ է ունենում միջազգային գործընկերների հետ*



*<<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ի էկոտուրիզմի բաժինը մասնակցում է մի շարք ցուցահանդեսների:*



<<Զանգեզուր>>կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ը հանդիպում է ունեցել Անդրկովկասյան Արահետ միջազգային կազմակերպության աշխատակիցների հետ, որոնց նպատակն է կառուցել համաշխարհային մակարդակին համապատասխան երկար ձգվող արշավային ուղի, որը տարածվելու է ամբողջ Կովկասով:

*<<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ-ի էկոտուրիզմի բաժինը կազմակերպում է վրանային հանգիստ հյուրերի և զբոսաշրջիկների համար:*

# Այցելուների կենտրոն

# Մեր այցելուները

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մանրամասը տեղեկատվություն ստանալու համար դիմել.
ՀՀ Սյունիքի մարզ, Ք. Կապան, Մելիք-Ստեփանյան 42/27
<<Զանգեզուր>> կենսոլորտային համալիր>> ՊՈԱԿ
Էլ. փոստ: zangezurkh@gmail.com
Էլ. կայք: www.zangezurkh.am
Հեռ: (+374) (0285) 2 00 64